14.04.2021
347-38

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահ
Կարեն Սարգսյանին

Կրկնակի տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2021 թվականի մարտի 11-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել Ջրային կոմիտե, որը մինչ օրս մնացել է անպատասխան:

Ուստի Ձեզ ենք դիմում կրկնակի տեղեկություն ստանալու հարցմամբ և խնդրում պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է դիմել քաղաքացի Հրանտ Ղարաբեկյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: 2021 թվականի փետրվարի 12-ին քաղաքացին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել է Ջրային կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ջրային Կոմիտե»-ի միջև 2019թ. հուլիսի 25-ին կնքված N13 համաձայնագրի վերաբերյալ: 2021 թվականի մարտի 9-ին տրամադրված պատասխան գրությամբ քաղաքացու հարցմանն ամբողջական պատասխան չի տրամադրվել:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի պատասխան «Տրամադրել 01.02.2019 թ. N/ԳԳ/1472 գրությունը, որը պարունակում է հանրային ցայտաղբյուրների ցանկը» հարցին՝ Կոմիտեն նշել է, որ «Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 01.02.2019 թ. N ԳԳ/1472 գրությամբ ներկայացված տեղեկատվությունը հանրային հրապարակման ենթակա չէ»: Քաղաքացին Կոմիտեին է ուղղել թվով 5 հարց, քանի որ պատասխան գրության մեջ ներկայացված տեղեկությունները համարակալված չեն (ինչը որպես պահանջ ամրագրված է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման մեջ), կարելի է միայն ենթադրել, որ խոսքը առաջին հարցով պահանջվող տեղեկության մասին է: Միաժամանակ մերժման հիմքն ամբողջական չէ, ներկայացված չեն այն օրենքի այն կոնկրետ դրույթը, որի հիման վրա վերոհիշյալ տեղեկատվությունը մերժվում է՝ պարունակելով պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք: Միաժամանակ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

հստակ չէ, արդյոք պահանջվող տեղեկատվությունը գաղտնիք է ամբողջությամբ, թե մասամբ:

2. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ջրային Կոմիտե»-ի միջև 2019թ. հուլիսի 25-ին կնքված N13 համաձայնագրի 1-ին կետով սահմանվել է, որ նախքան 2019թ. ավարտը «Վարձակալի Հիմնական կատարողական ցուցանիշները պետք է վերաբանակցվեն լավագույն միջազգային փորձի հիման վրա, և Վարձակալի կողմից նախաձեռնված բոլոր Հիմնական կատարողական ցուցանիշների շեմերը կփոխկապակցվեն նաև Վարձատուի կողմից կատարվող ներդրումների հետ»: Արդյոք վերը նշվածը իրականացվե՞լ է: Եթե այո, խնդրում եմ տրամադրել համապատասխան փոխկապակցվածությունները (պատասխան գրության մեջ այս հարցի վերաբերյալ ոչ մի նշում չի գտնվել):

3-րդ և 4-րդ հարցերին տրված պատասխանները ընդհանրական են և լղոզված, ուստի.

3. Խնդրում ենք տրամադրել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ջրային Կոմիտե»-ի միջև 2019թ. հուլիսի 25-ին կնքված N13 համաձայնագրի Կետ 2-ով սահմանված Վարձակալի **230 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային ծրագիր**ը:
4. Խնդրում ենք տրամադրել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ջրային Կոմիտե»-ի միջև 2019 թ. հուլիսի 25-ին կնքված N13 համաձայնագրի Կետ 2-ով սահմանված **230 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային ծրագիր**ի շրջանակում Վարձատուի կողմից **«առաջիկա երեք տարիների իրականացման ենթակա ներդրումային ծրագրի ծավալները՝ իրագործման ժամանակացույցով»** (Համաձայնագիր, 2-րդ կետ):
5. Ի պատասխան «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ջրային Կոմիտե»-ի միջև 2019թ. հուլիսի 25-ին կնքված N13 համաձայնագրի Կետ 3-ով սահմանված մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ հարցի, Կոմիտեն նշել է, որ Համավարակով պայմանավորված գործընթացները ժամանակավորապես դադարեցվել են: Խնդրում ենք տրամադրել մոնիտորինգի գործընթացի կասեցման/դադարեցման գործընթացը հավաստող փաստաթղթերը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան